

ՏՈՃԱՐՆ ԳՈՆՈՎԱՅԻ Ի ԲՈՍԱՆՆՈՅ

Վենետիկի Դրեվիզ գաւառին մէջ գիւղ մըն է Բոսաննոյ, հայրենիք Անտոն Գանու վայ արձանագործին, չքեղ հովիտ մը, արժանաւոր որրան վսեմ թարգմանչին բնութեան, ուր ծնաւ 'ի 1 նոյեմբերի 1757 թուականին, Հայրը չբաւոր ան գրիագործ մ'էր. ինքն ալ տղայութեան հասակէն սկսաւ գործածել քանդակիչ գրիչն և մուրճը. և մինչդեռ ձեռքը կը պարապէր մարմարի աշխատութեան, միտքը կը զբաղէր ոսկեփայլ երազներով: Գաղտնի ձայն մը կը մղէր զինքն արուեստին ճամբուն մէջ. բնութիւնը կ'ուսանէր, խորագոյնս կը զգար անոր գեղեցկութիւնքը. բայց չէր կրնար գտնել անոր գաղտնիքը: Առաջին փորձերը չէին համապատասխաներ իր ըղձիցը: Անցնելով Վենետիկ արուեստը սովորելու համար, գտաւ արուեստակութիւն, փոխանակ գեղեցկին կը տեսնէր հասարակը, փոխանակ պարզ բացատրութեան իմաստակութիւն: Ուշի ուշով կը դիտէր զբնութիւնը, սակայն և ոչ իսկ բնականն գեղեցիկ էր. կը պակսէր ընտրութիւն, նկարագիրը և ներդաշնակութիւն: Գնաց Հռոմ, և վերջապէս հօն գտաւ երևակայածն Յունաստանի հին արձանաց վրայ. որոնց հեղինակները ծաղկեցան 150 տարուան փառաւոր շրջանի մը մէջ, Պերիկլեսէն մինչև Փիդիաս, և վեհագոյն վարժապետը եղան այն արուեստին, որոնց ղեկ ևս հասնող չեղաւ. որոնք բովանդակ արուեստին բանեցուցին բնութիւնն ուսանելու, ոչ թէ նրութապէս օրինակելու զայն, այլ քաղելու գեղեցկութեան ծաղիկը և քերթողօրէն բացատրելու զայն, զուգաւորելով մեծախորհուրդ երևակայութեան հետ ձեռքն կատարելութիւնը:

Հռոմայ թանգարաններուն մէջ նկատելով յունական արուեստին գործոց այս գլուխները, Գանուլա գտաւ այն

գաղտնիքն սր կը փնտռէր, և գիտցաւ ոչ միայն իրեն ուսումնը ընել զայն, այլ պաշտամունք, որով եղաւ վերանորոգող արձանագործութեան և հասաւ փառաց կատարն: Բնտրի զգացմանն, ստեղծիչ հանճարոյն, որ կ'ոգևորէր զինքը, ներշնչեց սէրն հին ձեռքն. տեսաւ զբնութիւնն յունական աչքով, գուցէ ծայրայեղութեան մըց յըստաւ կութիւնը (purisme), բայց ստեղծեց աստուածային ձեռագործներ, որոնք անմահացուցին իր անունը:

Փառաց ու մեծութեան ծայրն հասնելով՝ կանգնեց Բոսաննոյի մեծագործ տաճարը, որուն չէնքը բոլորաձև է, ճակատը նման Աթենքի Պարթենոնի, և սիւներն հաւասար մեծութեամբ Հռոմայ Պանթէոնի: Այն բարձրութենէն, որուն վրայ կանգնուած է այս տաճարը, դիտողին առջև կը պարզուի գեղեցիկ տեսարան մը, կոհակաձև մշակած բլուրներ, բերրի դաշտավայր մը բազմամարդ գիւղօրէիք, և հեռուէն մէկ կողմանէ կը չրջապատեն Ապենները, միւս կողմանէ Եւգանեան բլուրք, և դէպ 'ի հարաւ կը կանգնի վսեմափառ Ալպեայց շղթան: Այն փառաւոր տաճարին չէնքն ամբողջապէս կը ներկայացունէ մեծ արուեստագիտին նախամեծար սիրելութիւնն յունական ճարտարապետութեան. ինքն անձամբ ձեռք հանդիսապէս անոր առաջին հիմունքն, 'ի 1 յուլիսի 1819 թուականին: Արդէն աւագ խորանին համար նկարեր էր ֆրիստոսի խաչէն վար առումը, և դառնալով Հռոմ կը պատրաստէր չրջապատիքան դակները, և կը կաղապարէր հրաշալի արձանակոյտն Գթութեան, Ամեն տարի կ'այցելէր տաճարին շինութեանը, և դարձնաւ կը վերողաւնար իր գործատունն 'ի Հռոմ'. նոր նոր ձեռագործներ կը լմնեցունէր, և անոնց գինը կը գործածէր տաճարին շինութեանը: Ան

գամ մ'ալ դառնալով Բոսանեոյէն 1822 թուականին, կը հիւսնդանայ 'ի վննետիկ, և հօն կը մեռնի 'ի 22 հոկտեմբերի, մեծ սուգ պատճառելով բոլոր Եւրոպայի:

Մարմինը փոխադրուեցաւ Բոսանեոյ նոյն հոկտեմբերի 27ին, և հիմա կը հանգչի տաճարին մէջ, ուր ինքն իր ձեռքը պատրաստեր էր կճեայ շիրիմը: Հռոմ 'ի յիշատակ Գանովայի կանգնեց հոյակապ շիրիմ մը 'ի Կապիտոլինոն, և բոլոր քաղաքականացեալ ազգերը հանդանակեցին նուիրելու դամբանարան մը 'ի վննետիկ Ֆրարի ըսուած Աստուածածնայ մեծագործ եկեղեցւոյն մէջ, օրինակելով իր հանճարածը Գիցիանոս պատկերահանին համար: Հօն կը պահուի իր սիրտը: Ազոլոյ մօտաւոր գիւղաքաղաքն ունեցաւ դամբան մը, զոր Գանովա սկզբնաւորեր էր, և լինցուց Գոմինիկոս Մաներա, իր մօրեղբորորդին և բարեկամը. գաւառագլուխ Դերվիզ քաղաքն ալ մշտնջենաւորեց Գանովայի յիշատակը Աթինէոնի մէջ մարմարեայ կիսարձանը կանգնելով. և բացման օրն հանդիսացուեցելով, 1 ապրիլի 1823, ու միտալ մը ձուլելով:

Բլրակին ոտը կը դանուի Գանովայի տունն և արձանարանն (Gypsothèque), ուր կը պահուին իր ձեռագործաց կը ձեայ կաղաքաները, ուրուագիծները, նկարած պատկերները ու գրեանքը: Այն բազմաթիւ ձեռագործներն, որ թողեր է Գանովա, իբր անդրիագործ, պատկերահան, շինուածապետ, կը վրկայեն իր հանճարոյն բարձրութեանը, և համբաւն համաշխարհական է, բայց համեստութիւնն՝ որով կը վարագուրէր իր ագնիւ հոգին, նուազ ծանօթացուց հասարակաց՝ ըրած բարեգործութիւններն ու առաքինութիւններն, որոնցմով զարգարուած էր: Այն ամեն պատուանշանքն որ իր վրայ կը տեղադրին, Սրբազան Պապէն սկսեալ բոլոր Եւրոպայի վեհապետք, այնպէս կ'ընդունէր իբր թէ իր անձին չըլլային, այլ ներկայացուցած աստուածային արուեստին հարկ մը որ կը մատուցանէին

այն վեհազուեք. իր անմահական ձեռագործներով վաստդած բոլոր հարցատութիւններն, որ ինչուան եօթը միլիոն սղուդի կը հասնէին, որ է ըսել իբր 37 միլիոն ֆրանգ և աւելի, հասարակաց և առանձնական բարեգործութեանց կ'առատաւանեռնէր, և մինչև հիմա ալ կը զգան անոնց արդիւնքը թէ հայրենի դիւղն և թէ այն բազմաւոր երկիրներն որ իր համակրութիւնը վայելցին: Կենդանութեան ժամանակ կը բարերարէր իր հարստութեամբը չքաւոր պատանհները, խրախուսելով զանոնք յուսումն արուեստին, հոգալով անոնց ամէն ծախքը և գնելով նախընծայ ձեռագործները, գաղտուկ ալ կ'օգնէր կարօտ արուեստաւորաց, և նախախնամութիւն էր բազմաթիւ աղքատ ընտանեաց:

Պատանոյ քաղաքը, որ շատ հեռու չէ Բոսանեոյէն, մեծ խնամքով կը պահէ իր Աթինէոնին մէջ, մասնաւոր դահլիճ սեփականեցելով, Գանովայի ինքնագիր անտիպ նամակները 588 թուով, միանգամայն բոլոր իր ձեռագործաց, մտածութեանց, երևակայութեանց ու օրինակութեանց բազմազան ինքնագիծ ուրուագրութիւնները, ինչպէս նաև 22000 սկզբնագիր նամականի ժամանակին երևելի մարդկանց, բոլորը 60 հատորի մէջ ամփոփուած, զոր բազմունիցեր եղբ մեկը ալ տեսնել, ինչպէս նախայիշատակեալ ամեն տեղուանքն, շատ անգամ այց ելլելով այնանային գիւղաղանցութեանց ժամանակ:

Գանովա մեծ ցաւ կը կրէր տեսնելով իր հայրենեաց թշուառութիւնը, աւար ըլլալով գաղղիական աշխարհակալութեանը, և պէտք եղած ժամանակ գիտէր համարձակ խօսիլ առ թագաւորս և առ իշխանս: Ելբ Մեծն Նաբոլէոն յետ փոխադրելու 'ի Գաղղիա ի տալական արուեստից գանձերը, կ'ուղէր նաև Բարիզ տանիլ Ֆրանսէզեան ըսուած Հելլիսլէան ալ, պատասխանեց Գանովա. — « վեհափառ Տէր, դոնեաբան մ'ալ իտալիոյ մնայ, Այս հին մահարձանքն կը կազմեն չլիքայ մը և հա-



ՏԱՀԱՐԴ ԳԱՆՈՒԹԻ



Ի ԲԱՍՏԱՆՈՑ

ւաքում մը ամբառ ուրիշ նմանեաց հետ, զորոնք կարելի չէ փոխադրել ոչ Հռոմէն և ոչ Նաբոլիէն »։ Վենետիկի վրայ խօսելով առ Նաբոլէոն, աշուրնե-րէն արցունք կու գային։

Իր ազդեցութեամբն յետ արգիլե-լու նորանոր աւարառութիւնքն, որով Գաղղիացիք կը մերկացունէին զիտա-լիա, մեծ միւրթարութիւն ունեցաւ, Նաբոլէոնի անկումէն վերջը, դաշնա-կից պետութեանց կողմանէ ետ պա-հանջելու առ իտալիա այն արուեստա-կան գանձերն, զորս աշխարհակալու-

թիւնն 'ի Բարիզ փոխադրել տուեր էր։

Վերջապէս Բոսանեոյ, ինչպէս բռ-վանդակ իտալիա, իրաւամբ կրնայ պարծել Գանովայի անմահական հան-ճարով իբր վերանորոգող գեղարուես-տից, առաքինութեամբքը և բարերա-րութեամբքը. և այն աննշան զիւշն, ուր ծնաւ, հիմա ուխտատեղի մ'է զիտ-նական և գեղարուեստասէր ամեն ազ-գէ ճանապարհորդաց, որոնք կ'երթան իրենց յարգանքը մատուցանելու այն չքնաղագիւտ հանճարոյն։

ՍՇԽՍՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՐԱՋԳԱՅԻՆ ՌԻՍՈՒՄԵԱԺՈՂՈՎ Ի ԲՍՐԻՋ ՅԱՄԻՆ 1875

Պերճիոյ Անվերսա քաղաքը 1869 թուականին որոշեց մէյմէկ արձան կանգնելու 'ի յիշատակ իր երկու երե-ւելի քաղաքացեացը, Մերգադար և Ուր-դելիտ, որոնք վեշտասաներորդ դա-րուն մէջ ծաղկեր էին աշխարհագրա-կան գիտութեամբք։ Այս առթիւ Պրիւք-սէլի թագաւորական գրատան վերա-կեցուն առաջարկեց հանդիսաւոր ժո-ղով կոչել ամեն ազգէ աշխարհագիր-ներ։ Այս առաջարկութիւնն ընդունե-լի եղաւ, և Անվերսա քաղաքը մեծ պա-տիւ ունեցաւ հիւրընկալելու, 14 օգոս-տոսի 1871 թուին, բազմաթիւ աշխար-հագիրներ և ճանապարհորդներ։

Այս առաջին փորձն էր որ պիտի ը-նէր Անվերսայի ժողովը, և թէպէտ 'ի սկզբան երկուանոց գումարուեցաւ, ա-կայն մեծաշուք և բազմաբեղուն վեր-ջացաւ, վասն զի ցըցուց թէ որչափ ընդ-արձակ հապարէջ ունին աշխարհա-գրական հարձանգք։ Բազմաթիւ խըն-դիրներ յուզուեցան, ոմանք լուծուե-ցան, և զանազան գումարմանց ժամա-նակ փայլեցան իրենց մասնաւոր ծանօ-թութեամբք շատ մը գիտնականք այլ և այլ ազգէ։ Այն ժողովականներէն

մէկն ալ էր Պրազիլի կայսրը, որ շատ նշանաւոր է իր բազմապատիկ հմտու-թեամբք, և մեծ եռանդն ունի զարգա-ցընելու իր երկրին մէջ կարևոր և օգ-տակար գիտութիւնները։

Անվերսայի ժողովն իր գործը լրա-ցուց՝ հանդիսարան մը կանգնելով աշ-խարհագրութեան վերաբերեալ առաւ-կաներու և գործիւններու։ Եւ երբ ժողո-վականք իրենց գործը լմինցունելով բաժնուելու վրայ էին, փափագ յայտ-նեցին որ նոյն հանդէսը նորոգուի եւ-րոպայի ուրիշ քաղաք մը, և միաձայն հաւանութեամբ ընտրեցին Բարիզ քա-ղաքն երկրորդ գումարման տեղի։

Բարիզու աշխարհագրական ընկե-րութիւնը մեծ փութով ընդունեցաւ ու կատարեց այս փափագը, կարգաւորե-լով թէ ժողով և թէ հանդիսարան աշ-խարհագրական հրահանգաց։ Այս ժո-ղովը բացուեցաւ, 1 օգոստոսի 1875 տարւոյն, Դիւյլլըռիի պալատան մէջ, ինչպէս արդէն յուլիսի 15ին աշխար-հագրական հանդիսարանը բացուեր էր նոյն պալատան մէջ ու բախի մասնաւոր հանգրուանի տակ։ Եւ տեսանք որ ան-ցեալ տարի այս աշխարհագրական